Հասցեատեր՝

«Կիլիկիա ՖԱ»

Էլեկտրոնային փոստի հասցե՝ gag.yeganyan11@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19.10.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	ԳԽ-004
Խախտում՝	1. Նախախաղային խորհրդակցությանը «ՖԱ Կիլիկիա» թիմի ներկայացուցչի ուշանալը, ոստիկանության ներկայացուցչի ուշանալը, գնդակ վերադարձնող երեխաների մարզչի ու մամուլի քարտուղարի բացակայությունը (Հավելված 1 Ա, 35-րդ կետ) 2. Գնդակ վերադարձնող երեխաների՝ միայն 3հոգով լինելը՝ 8-ի փոխարեն (Հավելված 1 Ա, 76-րդ կետ)
Առաջնություն՝	Հայաստանի Գավաթի Խաղարկություն
Խաղ՝	«ՖԱ Կիլիկիա» - «Ֆալկոնս», 10.10.2023թ. (9:1)

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Նախախաղային խորհրդակցությանը «ՖԱ Կիլիկիա» թիմի ներկայացուցչի ուշանալու, ոստիկանության ներկայացուցչի ուշանալու, գնդակ վերադարձնող երեխաների մարզչի ու մամուլի քարտուղարի բացակայության համար «Կիլիկիա ՖԱ»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
2. Գնդակ վերադարձնող երեխաների՝ 8-ի փոխարեն միայն 3 հոգով լինելու համար «Կիլիկիա ՖԱ»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

3. Վերոգրյալ կարգապահական խախտումների կրկնման պարագայում այլևս կիրառել ավելի խիստ պատասխանատվության միջոցներ:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: